600.0039.13.06.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2002 թվականի №39Ա
ք.Երևան

«Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի արտահանման № 0044 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 30-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բ) կետը, 23-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2002 թվականի ապրիլի 3-ի № 24 որոշմամբ հաստատված կարգը, «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության, «Էլեկտրոսվետ» բաժնետիրական ընկերության և «Սամցխե-Ջավախեթիի էներգաընկերության» միջև կնքված էլկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության՝ Վրաստանի Հանրապետության Ախալքալակի շրջան էլեկտրական էներգիայի արտահանման № 0044 լիցենզիայի՝ ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 6-ի №27 որոշման 2-րդ կետով սահմանված գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2002 թվականի հուլիսի 22-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***

13 հունիսի 2002 թ.
ժամը 17:00
Երևան